Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Ընդհանուր ներառականության առավելություններն ու բացթողումները»

Մենթոր՝ Նաիրա Անանյան

Կատարող՝ Աննա Աբովյան

2023

Բովանդակություն

Գլուխ 1.
Ներածություն……..էջ 3
1.Ի՞նչ է ներառական կրթությունը……էջ4
2. Սալամանկայի հռչակագիրը ներառական կրթության մասին.....……էջ10
3.Համընդհանուր ներառականության առավելությունները և բացթողումները……..էջ17
Գլուխ 2.
4. Սեփական փորձառությունից……էջ19
4.Եզրակացություն……..էջ24
5. Առաջարկություն.....էջ25
Գրականության ցանկ……էջ27

Ներածություն

«Մեր բարոյական պարտականությունն է յուրաքանչյուր երեխայի հնարավոր լավագույն կրթություն տալը»:

Դեսմոնդ Թութու

– Ես ոտքեր չունեմ:
– Ես չեմ լսում քեզ:
– Իսկ իմ աչքերը աչքերը չեն տեսնում ոչինչ:
– Դատողությունս մի քիչ տեղը չէ:
Սակայն բոլորս շփվել ենք ուզում, սովորել, խաղալ, աշխարհն ընկալել, մարդկանց հետ խոսել, սիրել ենք ուզում:
– Մենք անպետք չենք, չէ՛,
- Ո՛չ էլ անմիտք ենք
-Ոչ ո՛չ անլեզու…
– Կարող ենք նույնքան,
Որքան շատերդ
Մասնակից լինել
Աշխարհաշինման Փառավոր գործին…

Այս բանաստեղծությունը խոսում է ամբողջ աշխարհում ապրող միլիոնավոր հաշմանդամ երեխաների ու չափահասների փոխարեն: Նրանցից շատերն ամեն օր խտրականության են բախվում: Նրանց կարողություններն անտեսվում են, իսկ ունակությունները՝ թերագնահատվում: Նրանք չեն ստանում իրենց անհրաժեշտ կրթությունն ու բժշկական օգնությունը և դուրս են մղված իրենց համայնքի կյանքից: Սակայն հաշմանդամություն ունեցող անձիք ունեն միևնույն իրավունքները,ինչ մյուս բոլոր մարդիկ: Ներառական կրթությունը ցանկացած երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրչներից է: Այն բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ և սովորելու հնարավորություն է տալիս հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ԿԱՊԿՈՒ անձանց: Ներառական կրթությունը մշակվում է ավելի ճկուն մոտեցմամբ , որպեսզի բավարարի տարբեր կրթական պահանջներ ունեցող երեխաներին,և նրանք նույնպես դպրոցում սովորելու հավասար իրավունքներ ու

հնարավորություններ ունենան:

Ներառական կրթությունը սովորողների համար կրթություն ստանալու հիմնական ռազմավարությունն է, որի նպատակն է ձևափոխել կրթական ծրագրերը և վերացնել խոչընդոտները՝ հաշվի առնելով սովորողների անհատական կարիքներն ու պահանջները:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 2001-ին առաջինը Հայաստանում սկսեց ներառական կրթության ծրագիրը: Ի՞նչ ասել է ներառական կրթություն.

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների
ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Հնարավոր չէ ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչյուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

Կան որոշ հիմնական սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայրում:

— Բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջդպրոցական միջոցառումներին մրցույթներ, ցերեկույթներ, էքսկուրսիաներ և այլն:
— Ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել:
— Ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:
Հատուկ կրթություն.
— Երեխաների կրթությունը առանձնացված միջավայրում:
— Կրթությունը կառուցված է ուսուցչի անհատական աշխատանքի վրա:
Ինտեգրացված կրթություն.
— Երեխան հանրակրթական դպրոցում է:
— Երեխայի կրթությունը չի ուղեկցվել դպրոցների կազմակերպման, ուսումնական պլանների ու դասավանդման մեթոդների:
— Համապատասխան փոփոխություններով հանրակրթական:
Ներառական կրթություն.
— Երեխայի կրթությունը իր համայնքի սովորական դպրոցում:
— Ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են իրենց կարիքներով և կարողություններով:
— Կառուցված է թիմային աշխատանքի վրա:
Պետք է հիշել՝
— ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել:
— Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար.
Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ.
Դասապրոցեսում պետքէ ընդգրկվեն բոլոր երեխաները:Չկան ուժեղ կամ թույլ երեխաներ:Նրանցից յուրաքանչյուրը զգում է իր աշխատանքի և մասնակցության

կարևորությունը:
Վիճակագրական վերլուծությունները վկայում են,որ աշխարհում կա մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամությամբ մոտ կես միլիարդ մարդ:Այդ անձինք մեկուսացված են հասարակությունից և չեն մասնակցում իրենց երկրի զարգացմանը:

Պատմական ակնարկ.

Հայ ժողովուրդը պատմության մեջ հայտնի է խոցելի խմբերի հանդեպ իր ունեցած մարդասիրական մոտեցումներով: Հնում եկեղեցին իր վրա է վերցրել հաշմանդամներին և կարիքավորներին կրթելու, հոգ տանելու և ներառելու մեծ գործը: Սակայն խորհրդային տարիներին պատկերը փոխվեց. բացվեցին հատուկ հաստատություններ, և մարդիկ առանձնացվեցին հասարակությունից: Ընտանիքները տարիներով թաքցնում էին նման երեխաների գոյությունը՝ համարելով այն ամոթալի դժբախտություն: Բարեբախտաբար, այժմ պատկերը բավականին այլ է, և զգալի են դրական տեղաշարժերը հասարակության ընկալման և վերաբերմունքի մեջ: Անշուշտ, ոլորտում նշանակալի բարեփոխումներ են կատարվել՝ շնորհիվ մի շարք հասարակական, այդ թվում միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Առաքելություն Արևմուտք, Հույսի կամուրջ), ինչպես նաև գործին նվիրյալ անհատների և ծնողների, ովքեր պայքարել են իրենց երեխաների կրթության իրավունքի և կյանքի որակի բարելավման համար: Հայաստանի կառավարությունը ևս դրական քայլեր է ձեռնարկել երեխաների կրթության իրավունքն իրացնելու նպատակով, այս փաստն է վկայում ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգ:

Ո՞վքեր են ուսումնասիրել.

Պեստալոցին, որը տունը համարում էր բնական դաստիարակության և զարգացման հիմք, գտնում էր, որ մարդկանց ընտանեկան հարաբերություններն առավել բնական են, սակայն նա չէր ժխտում ուսումնական հաստատությունների դերը: Անգլիացի սոցիալիստ Ռոբերտ Օունը գտնում էր, որ ընտանիքի ազդեցությունը երեխայի զարգացման և ձևավորման վրա ունի անփոխարինելի ուժ, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող լավ է ճանաչում իր երեխային: Երեխայի ընտանեկան դաստիարակության և զարգացման համար ամուր հիմքը միմյանց սերն է:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել ԿԱՊԿ ունեցող երեխաների ներգրավվածության աստիճանը միջին դպրոցում:

Դիտարկել միջին դպրոցում դասավանդող ուսուցիչների վերաբերմունքը ԿԱՊԿՈՒ աշակերտների նկատմամբ:

Հետազոտության խնդիրը

- ✓ Բացահայտել ու վեր հանել սովորողի տարիքային առանձնահատկություններն ու յուրատիպությունները:
- ✓ Լուսաբանել սովորողի վարքագծի կառավարման գործընթացը:

Հետազոտական հարց

Արդյո՞ք հնարավոր է խմբային աշխատանքներին ներգրավել և մոտիվացնել ԿԱՊԿՈՒ աշակերտին դասապրոցեսին:

Համագործակցման մեթոդները.

Նպաստել ԿԱՊԿՈՒ երեխաների մոտիվացիան և ներգրավածության մեծացումը համագործակցության մեթոդների կիրառման ժամանակ:

Հետազոտության մեթոդաբանությունը

✓ աջակցություն սովորողներին,

✓ աջակցություն ուսուցիչներին,

✓ աջակցություն սովորողի վարքագծի կառավարմանը: Ըստ այդմ, ՀՀ-ում հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի օգնականը, ուսուցիչների հետ համագործակցելով, իրականացնում է սովորողների կատարողականության դիտարկում և այս կամ այն պատճառով առաջացած դժվարությունների վերհանում:

Ի՞նչ է ներառական կրթությունը

Ներառական կրթությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և դրանց կարիքը չունեցող անձանց համատեղ ուսուցումն է՝ առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով:

- Ներառական կրթությունը սովորողների համար կրթություն ստանալու հիմնական ռազմավարությունն է, որի նպատակն է ձևափոխել կրթական ծրագրերը և վերացնել խոչընդոտները՝ հաշվի առնելով սովորողների անհատական կարիքներն ու պահանջները:

Ինչո՞ւ է ներառումն անհրաժեշտ.

Երեխաները, անկախ հաշմանդամ լինելուց կամ կրթական դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:
Հաշմանդամ երեխաներն ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները:
Հաշմանդամ կամ սովորելու դժվարություններ ունեցող մարդիկ առանձնացման կամ պաշտպանության կարիք չունեն:

Ի՞նչ է անում ներառական կրթությունը.

Նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնվորված է:
Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաները պետք է կրթություն, որը կօգնի

նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել կյանքին հասարակության մեջ: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:
Ամբողջ աշխարհում ներառումը այլևս ապրելակերպ է, մարդկանց համատեղ ապրելու, աշխատելու և սովորելու կենսակերպ: Յուրաքանչյուր երեխա իրեն պետք է կարևորված զգա հասարակությունում: Հայաստանում ներառական կրթությունը, լինելով կրթության երիտասարդ համակարգ, դեռևս լիովին ձևավորված չէ, այսինքն իր առջև դեռևս չլուծված խնդիրներ ունի:

Սալամանկայի հռչակագիրը ներառական կրթության մասին.

Ըստ Սալամանկայի հռչակագրի ՅՈՒՆԵՍԿՕ ,1994 թ.համոզված ենք և հանդիսավոր հայտարարում ենք այն մասին, որ.
– յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնական իրավունք և պետք է հնարավորություն ունենա ստանալ և հասնել գիտելիքների տանելի մակարդակի,
–յուրաքանչյուր երեխա ունի անկրկնելի առանձնահատկություններ, հետաքրքրություններ, ընդունակություններ և ուսումնական կարիքներ,
–պետք է մշակել կրթության համակարգեր և իրականացնել կրթական ծրագրերն այնպես, որպեսզի հնարավոր լինի ուշադրություն դարձնել այդ առանձնահատկությունների և պահանջմունքների լայն բազմազանությանը:
–կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք պետք է կարողանան սովորել սովորական դպրոցներում, որոնք պետք է նրանց համար պայմաններ ստեղծեն մանկավարժական մեթոդների հենքի վրա՝ երեխաների կրթական պահանջմունքները բավարարելու նպատակով,
–նման ներառական կողնորոշմամբ սովորական դպրոցները հանդիսանում են խրատական հայացքների դեմ պայքարի, համայնքներում բարենպաստ մթնոլորտի ստեղծման, ներառական հասարակության կառուցման և բոլորի համար կրթության ապահովման առավել արդյունավետ միջոց. ավելին՝ նրանք ապահովում են իրական կրթություն երեխաների մեծ մասի համար և բարձրացնում են կրթության համակարգի արդյունավետությունը: Վերոնշյալ հռչակագրում խոսվում է յուրաքանչյուր երեխայի լիարժեք կրթություն ստանալու իրավունքի և դրա ապահովման մասին:

Ներառական կրթության գործընթացը Հայաստանի Հանրապետությունում.

Հայաստանի Հանրապետությունը շատ երկրների նման համընդհանուր ներառական կրթությունը հռչակեց որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Կրթության մատչելիությունն ու հասանելիությունն որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոց, ամրագրվել են դեռևս 1990- ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին երեխաների իրավունքների կոնվենցիան և Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը: 1994 թ. Աշխարհի 92 երկրների կառավարությունների ու 15 միջազգային կազմակերպությունների կողմից ստերագրված Սալամանկա հռչակագիրը սահմանեց,որ յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություն և կրթության հիմնարար իրավունք: Համաձայն այս հռչակագրի, կրթական ծրագրերը պետք է մշակվեն և իրականացվեն՝ հաշվի առնելով այդ առանձնահատկությունները: Ներառական կրթության գաղափարը Հայաստանում տեղ գտավ հռչակագրի ստորագրումից 11 տարի անց ՝ 2005 թվականին, երբ ընդունվեց համապատասխան օրենքը:Դրանից միայն 2 տարի անց Երևանի 10 դպրոցներ ստացան ներառական դպրոցի կարգավիճակ:Հետագայում ներառական դպրոցի կարգավիճակ ստացան ոչ միայն Երևանի, այլ նաև մարզերի շատ դպրոցներ: Ծրագրված է, որ մինչև 2025 թիվը Հայաստանում գործող բոլոր հանրակրթական դպրոցները պետք է դառնան ներառական հասանելի և մատչելի լինի բոլոր երեխաների համար: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև արդեն ողջ աշխարհում, ներառական կրթությունն այսօր համարվում է մի գործընթաց, որն անմիջապես արձագանքում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող «ԿԱՊԿՈՒ» երեխաների ուսուցման և դաստիարակության բազմակի կարիքներին՝ ներգրավվելով և ընդլայնելով նրանց մասնակցությունը կրթական գործընթացում, մշակութային և համայնքային կյանքում, միաժամանակ կանխելով նրանց `կրթական համակարգից դուրս մնալու խնդիրները: Ներառական կրթությունն այսօր ոչ միայն ընդունված գաղափարախոսություն է, այլ նաև՝ օրենքով հաստատագրված: Բազմաթիվ հանրակրթական դպրոցներ այսօր դարձել են ներառական: Դեռ ավելին՝ օրենքների փոփոխությունները միտված են այն բանին, որ Ներառական կրթություն հասկացությունը ընդհանրապես դուրս գա մանկավարժական հանրության խոսակցականից, ասել է թե՝ յուրաքանչյուր երեխա

առանձնահատուկ է և յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ մոտեցման կարիք ունի:

Ներառական կրթությունը մի համակարգ է, որը հենվում է բոլոր երեխաների,այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի վրա:Այն արձագանքում է բոլոր սովորողներին բազմազան կարիքներին , մեծացնում նրանց մասնակցությունը ուսումնական , մշակութային ու ժամանցային կյանքին: Այն ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության, մոտեցումներին, կառույցների և մեթոդական համակարգի մեջ, տարածվում է համապատասխան տարիքային խմբի բոլոր երեխաների վրա: Ներառական կրթությունը ելնում է այն համոզմունքից, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է: Ներառումը լրացնում է հատուկ կրթությանը: Հատուկ կրթությունը զարգացել է առանձին փուլերով, որոնց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամ երեխաների և ուսումնական դժվարություններ ունեցող սովորողների կարիքների բավարարման տարբեր ուղիները: Որոշ դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությանը, սակայն իրականացվել է մեկուսացված: Վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգերի նպատակահարմարությունը ինչպես մարդու իրավունքների սահմանափակման, այնպես էլ կրթության որակի ապահովման տեսանկյունից: Ներառական կրթության հանդեպ արդի մոտեցումը տարբերվում է նախկինում ընդունված այն տեսակետից, որ հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտները առանձին են կրթություն ստանում և ուսուցումն իրականացվում էր առանձին դասասենյակներում, նույնիսկ առանձին դպրոցներում: Մարդիկ ընդունել էին դա և արդեն հարմարվել էին այդ մտքին, որ հատուկ կրթություն՝ նշանակում է առանձին կրթություն: Ներկայումս կիրառվող մեթոդներն ու ծրագրերն ի վիճակի չեն բավարարելու մեկուսացված երեխաների ու դեռահասների կրթական կարիքները: Այժմ այդ նպատակով դիմում էին հատուկ խորագրերի հաստատությունների և մասնագետ մանկավարժների օգնությանը: Լավագույն նկատառումներով իրականցվող նման տարբերակման հետևանքը հաճախ լինում էր երեխաների մեկուսացումը : Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից, ուստի որևէ տեսակի հաշմանդամություն չի կարող արգելք լինել մարդու՝ կրթություն ստանալու իրավունքի համար: Առանձնացված հատուկ դպրոցներում երեխաներին

ուսուցանելը հակասում է տան, ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Չնայած հատուկ դպրոցների կրթական ծառայությունների որոշ առավելություններին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող «ԿԱՊԿՈՒ» երեխաների բաժանումը ընտանիքից ու տնից վկայում է այդպիսի մարդկանց նկատմամբ հասարակության մեջ գոյություն ունեցող նախապաշտմունքների մասին : Ներառական կրթությունն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, և հանրակրթական ժամակարգը պետք է հարմարվի բոլոր սովորողների անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ է զինել ուսուցման գործընթացի ճկունությամբ:

Որոշ ուսուցիչներ կարծում են, թե «ԿԱՊԿՈՒ» երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն հատուկ հմտություններ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ «ԿԱՊԿՈՒ» երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենն անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը

1. ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման ընթացքին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների կիրառումը,
2. նպաստում է բոլոր սովորողների ակտիվության և կրթության որակի բարձրացմանը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը հանրակրթական դպրոցներ ուղորդի ուսուցիչներին կիրառելու նոր՝անձնակենտրոն ուսուցման մեթոդներ՝ ապահովելով մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսուցման գործընթացում: Ինչ խոսք, ի լրումն այն ամենի՝ անհրաժեշտություն կառաջանա հատուկ տեխնիկական օժանդակության և երեխայի զարգացման կոնկրետ խանգարումներով պայմանավորված հատուկ սարքավորումների ու տեխնիկական միջոցների ներդրման: Այս գործունեության դրական արդյունք կարող է դառնալ դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները: Սալամանկայի հռչակագրում տեղ գտած թեզիստների իմաստն այն է ,այդ բոլոր երեխաները հավասար են, հետևաբար նրանք պետք է ունենան հավասար իրավունքներ և հավասար պայմաններում ստանան կրթություն: Հռչակագիրը մատնանշում է յուրաքանչյուր երեխայի յուրահատկությունը հաշվի առնելով անհրաժեշտությունը: Դա նշանակում է, յուրաքանչյուր երեխայի համար ուսուցման գործընթացում ապահովել ակտիվ

ուսումնական գործունեություն, որի շնորհիվ երեխան կզարգացնի իր կարողությունները, կյուրացնի կենսական անհրաժեշտության գիտելիքներ և կրթության հաշվին կդառնա հասարակության ակտիվ և լիիրավ անդամ:

ԱՈՒՊ-ները և համընդհանուր ձևավորումը.

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ունեն անհատական ուսումնական պլաններ: Անհատական ուսումնական պլաններն ունեն երեք հիմնական նպատակ՝ հասանելիություն, մասնակցություն և առաջընթաց: Այս եզրույթներից յուրաքանչյուրը նկարագրված է ստորև՝ Համընդհանուր ձևավորման համատեքստում:

Անհատական ուսումնական պլանի դերը ներառական կրթության կազմակերպման գործընթացում.

Անհատական ուսումնական պլան Ուսուցման կոլեկտիվ եղանակի ամենասկզբունքային և առանցքային կողմերից մեկը կրթության անհատականացումն է: Յուրաքանչյուր երեխա յուրաքանչյուր առարկայից պետք է ունենա իր անհատական ուսումնական պլանը, որի կազմանը մասնակցում է նաև երեխան: Այսինքն վերահանելով նրա առանձնահատկությունները, գիտելիքները, յուրացման տեմպը, երեխան նաև հստակ տեղեկանում է առաջիկա ամիսներին յուրաքանչյուր առարկաներից իր անելիքների հաջորդականությանը, այսինքն իր ԱՈՒՊ-ին (անհատական ուսումնական պլան): ԱՈՒՊ-ը ներառական դպրոցներում կազմվում է բացառապես ԿԱՊԿՈՒ երեխաների համար:
Անհատական ուսուցման պլանը (ԱՈՒՊ -ը) ուղեցույց է կամ միջոց ուսուցիչների, դաստիարակների, երեխաների հետ աշխատող մասնագետների, ծնողների համար: Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցումը հանրակրթական դպրոցներում արդյունավետ կազմակերպելուն և նրա կրթական հատուկ կարիքները բավարարելուն: Սովորողների ԱՈՒՊ-ը կազմակերպվում է դիտարկման և գնահատման արդյունքների հիման վրա: ԱՈՒՊ-ը կազմում է հետևյալ

բազմամասնագիտական խումբը. 1.ուսուցիչ 2.հատուկ մանկավարժ 3.սոցիալական աշխատող 4.ծնող 5.այլ մասնագետներ (հոգեբան, սուրդոմանկավարժ և այլն) ԱՈՒՊ-ը կրթական գործընթացի պլանավորումն է: Այն պետք է ունենա հստակ ձևակերպված վերջնանպատակ, տարեկան նպատակ, կարճաժամկետ խնդիրներ 17 (վերջնանպատակին և տարեկան նպատակին հասնելու համար) և տարեկան ծրագիր: ԱՈՒՊ-ում անպայման պետք է նշվի, թե որ ծրագրերից է օգտվել խումբը նպատակները և կարճաժամկետ խնդիրները ձևակերպելու համար: ԱՈՒՊ-ները կազմվում են պետության կողմից հաստատված հատուկ կրթության առարկայական չափորոշիչներով և ծրագրերով, որոնք առանձնացված են ըստ թեթև, չափավոր, ծանր մտավոր հետամնացության: ԱՈՒՊ-ը գրվում է որոշակի ժամանակահատվածի համար: ԱՈՒՊ-ը կազմող թիմը պետք է հավաքվի 6, իսկ անհրաժեշտության դեպքում 3 ամիսը մեկ անգամ, որպեսզի վերանայի նպատակներն ու խնդիրները, քննարկի երեխայի ուսումնական առաջընթացը: Երեխայի մեծանալու հետ փոփոխվում են նրա ուսումնական կարիքները: ԱՈՒՊ -ը պետք է փոխվի ըստ անհրաժեշտության: ԱՈՒՊ-ի միջոցով ձևակերպվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության նպատակները: ԱՈՒՊ-ներն օգնում են դպրոցական թիմերին պլանավորելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ուսումը և նրանց համար ծառայությունների տրամադրումը: Դպրոցների ղեկավարները պետք է ներկա լինեն ԱՈՒՊ-ի մշակման նպատակով կազմակերպվող հանդիպումներին, որպեսզի իմանան, թե ինչ ռեսուրսներ կարող են անհրաժեշտ լինել և թե ինչպես է իրենց անձնակազմը հասնելու նպատակներին: ԱՈՒՊ-ը կազմող բազմամասնագիտական թիմերը կարող են շտապել նպատակներին հասնելու համար՝ առանց հաշվի առնելու աշակերտների և նրանց ընտանիքների հույսերը: Այս առումով կօգնի երեխաների համար տարբերակների և հարմարությունների ընտրությունն ու գործողությունների պլանի մշակումը: ԱՈՒՊ-ներն անհատականացված են, հետևաբար մի աշակերտի համար սահմանված նպատակները չպետք է ուղղակիորեն արտագրվեն մեկ այլ աշակերտի համար:

. Ուսումնառության համընդհանուր ձևավորում <> հասկացությունն առաջին անգամ օգտագործել է Ռոն Մեյսը՝ նկարագրելու համար բոլորի՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի շինություններ կառուցելու գաղափարախոսությունը: Մեյսը անվասայլակով էր տեղաշարժվում և անվերջ խնդրում էր, որ շենքերում ապահովվի ֆիզիկական մատչելիությունը: Ի վերջո, նա

առաջարկեց շենքերը նախագծելիս հաշվի առնել մատչելիության հանգամանքը՝ խնայելով ժամանակ, գումար և բարելավելով բոլորի կյանքը: Լայն իմաստով, ճարտարապետական համընդհանուր ձևավորման նպատակն է ապահովել անխտիր բոլոր շինությունների մատչելիությունը անխտիր բոլորի համար: Սակայն համընդհանուր ձևավորման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել ճարտարապետությունից զատ այլ բնագավառներում: Կան համընդհանուր ձևավորման բազմաթիվ այլ օրինակներ.

● Ճամփեզրերի կտրվածքները, որոնք ստեղծվել են սայլակով տեղաշարժվողների համար, բայց անհրաժեշտ են անվասայլակներ օգտագործողներին, մանկասայլակով երեխայի հետ զբոսնող ծնողներին, հեծանվորդներին և այլոց:

● Աուդիոգրքերը, որոնք ստեղծվել են տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար, բայց լայնորեն կիրառվում են նաև տեղեկությունը լսողությամբ ընկալել նախընտրող, կարդալու ժամանակ չունեցող անձանց կողմից:

● Ձայնային ազդանշանով վերելակները, որոնք տեսողության խանգարում ունեցող անձանց նախազգուշացնում են վերելակի ժամանելու մասին, բայց օգտակար են նաև հեռախոսի մեջ խորասուզվածների համար: Հայաստանում շատ շենքեր պատմական նշանակություն ունեն, ուստի համընդհանուր ձևավորումը այստեղ լուրջ մարտահրավեր է: Շատ դեպքերում ֆիզիկական մատչելիությունը բարելավելու համար շենքերն արդիական տեխնոլոգիաներով ձևափոխվում են: Ստացված արդյունքները միշտ չէ, որ գոհացուցիչ են:

Մատչելիությանը 5 միտված որոշ մոտեցումներ (օրինակ՝ թեքահարթակների ստեղծումը, բազրիքների տեղադրումը և այլն) երբեմն արդյունավետ են, կան նաև ոչ արդյունավետ լուծումներ: Հայաստանում ժամանակակից շենքերի նախագծման ժամանակ համընդհանուր ձևավորման սկզբունքներին հետևելը նոր ձևավորվող մոտեցում է:

1.Համընդհանուր ձևավորումը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը.

Ներառման գործում ուսումնառության համընդհանուր ձևավորման կարևոր ներդրումներից մեկը մանկավարժի ուշադրության կենտրոնացումն է սովորողների բազմազանության վրա: Հայաստանում մասնագետների կողմից քայլեր են արվում հաշմանդամության ընկալումը վերաիմաստավորելու համար: Մանկական գրականության միջոցով մարդկանց տարբերությունների ներկայացման (Ավագյան, Բաղդասարյան և Սարգսյան, 2016) և ուսուցիչների վերապատրաստումների նկատամբ նոր մոտեցումների մշակման արդյունքում խորանում են մարդկային բազմազանության մասին պատկերացումներն ու տարբերությունների ընդունումը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելիս սովորողի խնդիրները մատնանշելու փոխարեն առանձնացվում ու երևան են բերվում նրա ռեսուրսները և ներուժը:

Այսօր Հայաստանում գնալով ավելի է տարածվում բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունը, և այն փաստի ընդունումը, որ մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու իմաստավորում տեղեկատվությունը, ճանաչում պատկերները, նրանց մոտ նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջանում է դասավանդման որոշակի մոտեցման կիրառման դեպքում (Vygotsky, 1962): Ուսումնառության համընդհանուր ձևավորումը ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ ցանկացած դպրոցում սովորում են կրթության ամենատարբեր պայմանների կարիքներ ունեցող բազմազան աշակերտներ: Ուսումնառության համընդհանուր ձևավորումը հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են <> և <>, կամ սովորական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (Rose & Meyer, 2005):

Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք տեսակների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական: Ճանաչողական ուսուցումը վերաբերում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը: Սրան սովորաբար նպաստում է ուսուցչի աշխատանքը կամ տեքստի ընթերցումը: Ռազմավարական ուսումնառությունը վերաբերում է որոշակի 7 բովանդակությանը, հասկացություններին արձագանքելու սովորողի կարողությանը կամ հմտություններին: Ռազմավարական ուսումնառության համար սովորողը պետք է ծանոթանա (ճանաչի) և կարողանա արձագանքել

հասկացությանը: Ուսուցման այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կամ դասարանում բանավոր պատասխանելու միջոցով: Հուզական յուրացումը վերաբերում է նյութը յուրացնելու սովորողի մոտիվացիային: Առանց մոտիվացիայի սովորողների կողմից յուրացումը ավելի մակերեսային է:(Clampa, 2014; Malone & Lepper, 1987; Mega, Ronconi & DeBeni, 2014:

Որո՞նք են կրթական ներառման առավելությունները.

•Հասակակիցների ազդեցությունը. Կրթական ներառումը խթանում է բոլոր,
• Երեխաների միջև փոխհարաբերությունները: Սոցիալականացում,
Ներառական մեթոդաբանությունը հեշտացնում է շփումը,
• Բոլոր տեսակի անհատների հետ: Ինքնագնահատականը,
•Նախապատրաստում մեծահասակների կյանքին,
•Անհատական ուժեղ և նվերների մշակում, յուրաքանչյուր երեխայի համար բարձր և համապատասխան սպասումներով,

- Անհատական նպատակների վրա աշխատելը, միաժամանակ մասնակցելով դասարանական կյանքին `նույն տարիքի այլ ուսանողների հետ, կբարձրացնի յուրաքանչյուր երեխայի կարողությունները,
- Ներգրավել ծնողներին իրենց երեխաների ակադեմիական կրթության և տեղի դպրոցական գործունեության մեջ,
- Հարգանքի և պատկանելության դպրոցական մշակույթի խթանում,
- Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս սովորելու և ընդունելու անհատական տարբերությունները ` նվազեցնելով բռնության և բռնության ազդեցությունը,
- Ընկերության զարգացում այլ երեխաների բազմազանության հետ, յուրաքանչյուրն ունի իր անհատական կարիքներն ու կարողությունները,

Համայնքի ներսում բազմազանության և ավելի լայն մակարդակի ներառումը:

Թերությունները կամ խոչընդոտներն են՝

• Տարբեր ոլորտներում մանկավարժների կողմից պատրաստվածության բացակայությունը:

.Կրթելու, մոտիվացնելու, բովանդակության ներկայացման, գիտելիքների փոխանակման տարբեր եղանակների իմացության պակասը:

Սեփական փորձառությունից

Բոլոր ԿԱՊԿՈՒ երեխաները և՞ միանման են, և՞ տարբերվող:
Միանման են՝ շրջապատող մարդկանց աչքերով, ովքեր դեռևս նրանց հասարակության լիիրավ անդամ չեն ընդունում:
Տարբեր են՝ ամեն մեկն իր ներաշխարհով և հոգու խորությամբ:

ԿԱՊԿՈՒ երեխաները ավելի լավ են զգում իրենց,թե ինչպես են ուշադրություն դարձնում,ուշադիր լինում իրենց նկատմամբ և սիրում:
ԿԱՊԿՈՒ երեխաները բնազդաբար են զգում սիրել-չսիրելը:

ԿԱՊԿՈՒ երեխաները հիմնականում գեղեցիկ են և նրբանկատ:Նարեն նույնպես գեղեցկատես և շատ զգացմունքային աշակերտուհի է, սովորում է Նոյեմբերյանի N 2 հիմնական դպրոցում, հինգերորդ դասարանում: Նարեն շուտ հուզվող,կամակոր և իր կամքն առաջ տանող աշակերտուհի է: Սիրում է անգլերեն, մաթեմատիկա և համակարգչով զբաղվել: ՉԻ սիրում գրել կամ կարդալ : Նախկինում ինքնուրույն չէր գրում,դասերին շուտ հոգնում էր և քնում,սիրում էր քայլել դասասենյակում,լալիս էր, երբեմն՝ անհասկանալի պատճառով,միշտ պետք է կողքին նստած լինեին աջակցող թիմի ուսուցիչներից:
Արդեն հինգերորդ դասարանում քիչ-քիչ սկսեց հարմարվել դասի ռեժիմին,կարդալուն ,ինքնուրույն գրելուն,դասին չքնելուն :Այժմ մասնակցում է դասերին, ձեռք է բարձրացնում, պատասխանում է ուսուցչի հարցերին:
Կամակորությունը մեղմացել է ,կատարում է հրահանգները:Դասընկերները ուշադիր են Նարեի նկատմամբ,օգնում են միշտ հանել գրքերը,պատրաստվել դասին,դասասենյակից դասասենյակ բարձրանալ իջնելուն:
Նարեն ոգևորվում է՝ 9 և 10 միավոր գնահատականից:Գրում է,ներկայացնում առարկայի ուսուցչին և գնահատվում, ոգևորվում և ուրախությանը չափ չի լինում:

Նարեի հետ աշխատում ենք նկարելով,պատկերազարդ քարտերով,որին պատկերված են հայերեն,անգլերեն,ռուսերեն տառեր և համահունչ նկարներ:
Պայուսակից ինքնուրույն հանում է տվյալ դասաժամի դասագիրքն ու տետրը,քիչ է քայլում դասի ժամին և կատարում է հրահանգներս: Նախկինի նման շուտ չի հոգնում: Նարեն ունի շատ նուրբ հոգի ,մեղմություն,շատ ուշադիր է և ունի լավ հիշողություն:

Նարեի հետ բարևում ենք ողջագուրվելով և ժպիտով:Հարցնելով որպիսությունն ու ստուգելով տրամադրությունը, անցնում ենք դասի :Սկզբից՝ սկսում ենք թեթև ու հեշտ առաջադրանքներից և աստիճանաբար բարդացնում:Նարեին անընդհատ պետք է ոգևորել և թույլ տալ մի քանի րոպե աշխատելուց հետո հանգստանա: Հանգստանում է քայլելով իր երևակայական աշխարհի հետ զրույցով ,ժպիտով և շարժումներով, կամ էլ գլուխը դնում է սեղանին, ձեռքերին հենած:
Սկզբում սկսում ենք պատկերազարդ քարտերով և ուշադրության կենտրոնացում ունեցող նկարներով ,այնուհետ քիչ-քիչ բարդացնել հանձնարարությունը:Շատ զգայուն և պարզ հոգով օժտված աշակերտուհի է: Սիրում է լինել ուշադրության կենտրոնում և ուզում է, որ միշտ զբաղմունք ունենա:
Չի սիրում մենակություն կամ առաձնանալ
Նարեն սիրում է օգնել ուսուցիչներին ,կատարել նրանց հանձնարարությունները : Նարեի համար շատ կարևոր է ուսուցչի կողմից իր նախասիրությունները հաշվի առնելը, իր անձը արժևորելը:

Տրամադրությունից,թե ինչ է զգում այդ պահին և ինչ է մտածում:
Տխուր ժամանակ չի սիրում ոչինչ անել,միայն պետք է շոյել և հաճելի խոսքեր լսել իր մասին:
Ուրախ ժամանակ աշխույժ և ժպիտով ուրախ կատարում է առաջադրանքները:

Նշեմ մի քանի դիտարկումներ, որոնք կատարել եմ Նարեի հետ միևնույն դասաժամին ներկա գտնվելով:

Շատ լավ իմանալով անգլերեն՝ Նարեն կարողացավ <<Բնություն>> առարկայի դասաժամին ուսուցչուհու համար անգլերենից հայերեն թարգմանել <<Բույսերի կառուցվածքը>> դասը, որից հետո ուսուցիչը նյութը բացատրեց հայերեն լեզվով:

Նարեն իրեն արժևորված է զգում նաև ԹԳՀԳ- ի ժամերին: Նա ուսուցչի թույլտվությամբ նստում է ուսուցչի համակարգչի մոտ, իրեն զգում ուսուցչի

օգնական դերում: Ուսուցիչն էլեկտրոնային գրատախտակի մոտ աշակերտներին բացատրում է դասը և ժամանակ առ ժամանակ հրահանգներ տալիս Նարեին:

Նարեի համար դասերից ամենակարևորը անգլերենն է: Նա սրտատրոփ սպասում է թե՞ դասաժամի սկսվելուն, թե՞ ուսուցչուհի Նախշուն Խալափյանի գալուն: Ուսուցչուհու մեղմ ու հոգատար վերաբերմունքը, երեխաների և իր նկատմամբ հավասար մոտեցումը գրավում է Նարեին:

Անգլերենի ժամերին Նարեն հաճախակի է վարժ անգլերենով պատմում իր դիտած մուլտֆիլմերը, թվարկում գործող անձանց և նրանց կատարած գործողությունները: Ուսուցչուհին կարողանում է դասանյութի հետ կապել Նարեի ուժեղ կողմերը:
Ներկայացնում եմ Նարեի մասնակցությամբ մայրենիի դասը:
Դասարան՝ V (ա):

Թեմա՝ Նամակագրություն:

Նամակների տեսակները:
Հայտնի մարդկանց նամակագրությունը:

Շարադրություն՝ Նամակ հարազատ մարդու :

Նպատակը՝
1.զարգացնել գրավոր և բանավոր խոսքը,
2. սովորեցնել մտածել
3. հասկանալ դասի իմաստը,
4. գտնել անհրաժեշտ տեղեկություններ,
5. պարզ խոսքերով բացատրել :

Վերջնարդյունք՝ աշակերտը պետք է իմանա.

1.թեմային առնչվող բառապաշարը,
2.տրված քերականական նյութը «կոչական»,
3.նամակի կարևորության դերը մեր կյանքում:

Մեթոդներ և հնարներ՝

1.քարտային աշխատանք,
2.նամակների տեսակներն ու ձևերը,
3.ի՞նչ ձևով են գրում նամակներ:

Միջառարկայական կապ՝

Անգլերենով/ հեռախոսով կամ համակարգչով/ վերաշարադրել նամակագրությունը և գրելաձևը:

Ընդհանուր գաղափար՝

համակարգային և կառուցվածքային տեսակներ:

Հարց ու պատասխան:

Դասի վերլուծություն.

Նարեն ի՞նչ հասկացավ և սովորեց:

Ես նոր մեթոդներ եմ ուսումնասիրել և տեղայնացնելով դասի թեմայի հետ՝ փորձում եմ կիրառել:
Այս ամենը Նարեին բացատրել ,որքան հնարավոր է պարզ և խաղային տարբերակով և ամենակարևորը դադարներով,թույլ տալ հանգստանալ մի քանի րոպե:
Նարեն շարադրության մեջ նամակը գրել էր տատիկին:Ձեռք բարձրացրեց կարդաց մի քանի նախադասությամբ: Ուսուցիչը ոգևորեց, Նարեն շատ ուրախացավ և շատ գոհ էր իր կատարած աշխատանքից:
Նարեն երբ ցանկանում է արտահայտվել կամ կատարել որևէ մի գործողություն,ապա անպայման պետք է թույլատրել: Չի կարելի արգելել ,որովհետև նեղվում և հուզվում է:Նոր դասի թեման կամ ինչ-որ բառ անհասկանալի լինելու

դեպքում՝ Նարեն վերցնում է իմ հեռախոսը ,բացում թարգմանության բաժինը,հայերենից թարգմանում անգլերեն և հասկանում տվյալ բառի իմաստը:
Ունի նաև արտիստիզմ ,դերասանական ձիրք,միջոցառումներին լավ հիշում է հատկացված տեղն ու դերը և կատարում է հանձնարարված գործողությունները:Սիրում է լինել բեմի վրա և ուրախանում է,ոգևորվում,խրախուսական խոսքերից և նվերներից ավելի է լավ զգում իրեն:
Ցանկացած երեխայի կամքին չի կարելի դեմ գնալ և ստիպել անել այն ամենը ինչ մենք ենք ցանկանում,ավելի խոցելի խմբին են պատկանում ԿԱՊԿՈՒ երեխաները:Երեխային միշտ պետք է թույլ տալ լինել ազատ և անկաշկանդ արտահայտել իր մտքերը ,քանի որ նրանք ունեն իրենց յուրովի մտածելակերպն ու ներաշխարհը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած ԿԱՊԿՈՒ երեխայի հետ ճիշտ աշխատելով՝ կարելի է բացահայտել նրանց նախասիրությունները, թույլ և ուժեղ կողմերը: Հայտնաբերելով ԿԱՊԿՈՒ աշակերտներ թույլ կողմերը, շտկելով դրանք և հենվելով ուժեղ կողմերի վրա կարելի է զարգացնել այնպես, որ հետագայում նրանք կյանքում գտնեն իրենց տեղը : Պատմության մեջ շատ հայտնի աուտիկներ կան, ովքեր դարձել են հռչակավոր և հանրահայտ իրենց կատարած գործերով:

Ֆիզիկական և հոգեկան խնդիրներ ունենալը դեռ պատճառ չէ մարդուն հատուկ պիտակավորում տալու համար:Հայտնի և տաղանդավոր մարդիկ,ովքեր ունեցել են առողջական խնդիրներ ,ապացուցել են,որ նույնիսկ նման ախտորոշմամբ կարող են ապրել լիարժեք կյանքով և աշխարհին զարմացնել իրենց գլուխգործոցներով: Անդրադարձել եմ այն մարդկանց,ովքեր անկախ առողջական խնդիրներից՝ պատմության մեջ և աշխարհին հայտնի են որպես մեծ դասականներ և հանճարներ՝ 1.Էռնեստ Հեմինգուեյ ,2. Լյուդվիգ Վան Բեթհովեն,3. Վինսենթ Վան Գոգ,4. Ռեյ Չարլզ,5.Ագաթա Քրիստի,6.ՉարլզԴարվին,7.Նիկոլա Տեսլա,8.Լիոնել Մեսսի,9.Վուդի Ալեն և շատերը :

Ուսումնասիրենք Ագաթա Քրիստիի կյանքը և առանձնահատկությունները: Ծննդյան ամսաթիվը՝ 15 սեպտեմբերի, 1890 թ.: Հանդիսանում է դետեկտիվ արձակի ժանրի համաշխարհային ամենահայտնի հեղինակներից մեկը:Նա կրթված էր, գեղեցկատես, բայց, ցավոք, ուներ լեզվական արատ:

Մասնագիտությունը՝բուժքույր,գրող,վիպասան,սցենարիստ,դրամատուրգ,արձակագիր ,ինքնակենսագիր,բանաստեղծուհի և դրամատուրգ :

Ագաթա Քրիստին համարձակ և ուժեղ կին էր: Նա օդաչու էր, մեքենա էր վարում, զբաղվում էր ձիավարությամբ և ջրային սպորտով, շատ էր ճանապարհորդում:

Ներառական կրթությունը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք-կողքի, նույն դպրոցում և դասարանում: Հաջող ներառման իրականացման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչները ներգրավված լինեն մասնագիտական զարգացման գործընթացում և կիրառեն դասավանդման արդյունավետ մոտեցումներ: Առանց յուրահատուկ մոտեցումների ու դասավանդման բազմազան մեթոդների իմացության ուսուցիչները չեն կարող կյանքի կոչել որակյալ կրթությունը բազմազան կրթական կարիքներ ունեցող աշակերտների հետ:

Ուսումնասիրելով մեր դպրոցում ուսուցիչների վերաբերմունքը ԿԱՊԿՈՒ աշակերտների նկատմամբ՝ ես հասկացա, որ մենք ունենք փորձառու, ԿԱՊԿՈՒ աշակերտների նկատմամբ գրագետ մոտեցում ցուցաբերող ուսուցիչներ, ովքեր կարողացել են բաց ահայտել նրանց նախասիրությունները և դրանց վրա հենվելով՝ ՈՒՀՁ սկզբունքներով ուսումնառություն իրականացնել: Հասկացա, որ նրանցից յուրաքանչյուրի մոտեցումը յուրովի է և արդարացված՝ հարմարեցրած առարկայական բովանդակությանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկում եմ՝

1. Իրականացնել ուսուցիչների առաջավոր փորձի փոխանակում,

2. Կազմակերպել միջոցառումներ ԿԱՊԿՈՒ աշակերտների ակտիվ մասնակցությամբ. դրանք կնպաստեն՝ ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ- ծնող կապի ամրացմանն ու ԿԱՊԿՈՒ աշակերտների լիարժեք բացահայտմանը:

3.Լինել համբերատար, ուշադիր և զգոն ԿԱՊԿՈՒ աշակերտների նկատմամբ:

4.Ապահովել դրական միջավայր՝ լինելով կապող օղակ ԿԱՊԿՈՒ երեխաների և այլ աշակերտների միջև:

5.Աշխատել ծնողների հետ կողք-կողքի՝ ապահովելով համագործակցությունն ու վստահությունը:



Միասին աշխատելով ընդհանուր խնդիրների լուծման ուղղությամբ՝ աշակերտները կտեղեկանան միմյանց մասին՝ հայտնաբերելով յուրաքանչյուրի ուժեղ կողմերը, կարողություններն ու ձգտումները, ինչպես նաև իրենց ընդհանրությունները:

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ

1.«Ներառական կրթություն»-ուսումնական ձեռնարկ, 2017թ.

2.«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը>>-ձեռնարկ 2018 թ

3. Ներառական կրթության ռազմավարություններ

4.Ներառական կրթությունը գործնականում (ուսումնամեթոդական ձեռնարկ) Հեղինակ՝ Սյուզաննա Պետրոսյան

5. «Սալամանկայի հռչակագիր» https://ampop.am/inclusive-education-in-armenia/

6. https://hy.wikipedia.org/wiki

7. Հովսեփյան Վ. «Ներառական կրթության կայացման մի քանի խնդիրների մասին»-մանկավարժություն ամսագիր, 2017

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ - UNICEF

8. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ Ուսումնասիրության զեկույց

9. «Անհատական ուսուցման պլանի մշակման մեթոդական ուղեցույց»- Թադևոսյան Ս. 2016 ձեռնարկ

10.https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-13/93399c4aa34193a1db66ee38430b06a2.pdf